ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.01.2022թ. N 3/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.02.2022թ. ժամը 11-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Կուսիկյանը, Լ.Նալբանդյանը, Ա.Ավետիսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Ա.Պատուրյանը:

1" Գնի նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման և հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ռ.Գրիգորյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնման հրավերի 8.7 կետի պահանջներին համաձայն գնի նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցելու համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած «Դանիամ» ՍՊԸ-ին գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրավիրել էր 04.02.2022թ. ժամը 11-00-ին մասնակցելու բանակցություններին: 04.02.2022թ. ժամը 11-00-ի դրությամբ բանակցություններին մասնակցելու համար ներկայացել էր «Դանիամ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար «Դանիամ» ՍՊԸ-ին տրամադրեց 10 րոպե: Բանակցությունների ավարտին «Դանիամ» ՍՊԸ-ն հայտով ներկայացված գինը թողեց անփոփոխ:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին վերաբերյալ

1" «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ոչ գնային չափանիշները գնահատվել են հրավերի 2.4 կետի համաձայն:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն*	35	35
Աշխատանքային ռեսուրսներ**	35	35
Ընդամենը	70	70

*«Դանիամ» ՍՊԸ-127 423 355 ՀՀ դրամ

**«Դանիամ» ՍՊԸ-13880 օր

3. Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով՝ համաձայն հրավերով սահմանված բանաձևի:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Գնային պայման	30	30
Ընդամենը	30	30

Ընտրված մասնակից է ճանաչվել այն մասնակիցը, որին տրված գնահատականների հանրագումարն (ՄՓՄ + ԱՌՄ + ԳՄՄ) ամենաբարձրն է:

Հ/Հ	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
	Մասնակիցների անվանումները
	«Դանիամ» ՍՊԸ
1	100

3. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը, հանձնաժողովը որոշեց՝

1. «Դանիամ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Դանիամ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Դանիամ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գրիգորյան

Անդամներ՝ Ռ.Կուսիկյան

Լ.Նալբանդյան

Ա.Ավետիսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան